ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 մայիսի 2016 թվականի N 53

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. N 2335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգը, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ**

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանին 3 օրով՝ 12.05.2016թ. մինչև 14.05.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ պաշտոնական գործերով:
2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանին 3 օրով՝ 11.05.2016թ. մինչև 13.05.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ <<Գիտելիքների գնահատման կենտրոն>> ՊՈԱԿ՝ պաշտոնական գործերով:
3. ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական Վիկտորյա Դավթյանին 3 օրով՝ 12.05.2016թ. մինչև 14.05.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության աշխատակազմ՝ պաշտոնական գործերով:
4. ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական Զարզանդ Նիկողոսյանին 3 օրով՝ 11.05.2016թ. մինչև 13.05.2016թ. ներառյալ, գործուղել ք. Երևան՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն՝ պաշտոնական գործերով:
5. Աշխատակազմի տեխնիկական սպասարկող անձնակազմի վարորդ Վահե Հարությունյանին իրեն ամրակցված Տոյոտա մակնիշի 800 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:
6. Աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. մայիսի 11
ք. Կապան